



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

21465

891.99.09

S-38

2003

891.542.09

Գ-95

414
x 203757

414

ԿՐԻՏԻԿԱՆ

Ե Ի

նորա լեզույ ստեղծած հեղինակ շատերի

ՀԱՍԱՀՈՐՈՒԹՅԱՆԸ

այլև

ՊԵՏԵՍԻԱՆ

„ԹՈՉՆԻԿ“

Աշխատանքներ

ԷՄԻՆԵՅ ՏԻՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

1876

Տարածի Չարսիս Գ. Յակոբեան:

ԵՐԵՎԱՆ

891.99.09

S-38

Handwritten notes in Armenian script, including numbers like 1876 and 1649-55, and some illegible text.

891.99.09

5-38

300

1649-55

ԿՐԻՏԻԿԱՆ



Ե Ի

Նորա լերայ ստեղծման Տեղերի շարքի

ՀԱՍԿՅՈՒՌՈՒԹՒՆԸ

այլև

Գ Ա Տ Ա Ս Ի Ը Ն

„ԹՈՉՆԻՎ“

1006
29106

Եշխարհագրական

ԷՄԻՆՍՅՈՒՆԻ ԳՐԱԳՈՐԱԿԱՆՅՈՒՆ

1876

Ի Տպարանի Ջրաբերայ Գ. Օսկանյան:

ԵՐԵՎԱՆ

4714 2/2

Читая сочинение знаменитаго автора, мы поправляемъ наши сужденія по его взглядамъ; напротивъ того, читая малоизвѣстнаго автора, мы поправляемъ его сужденія по нашимъ взглядамъ.

Размышл. анонима.

„Ամենքը փորձով և խելքով զիտեն, թէ լաւ է քիչը, թերին, փառը և անկատարը ունենալ և որ ըստ օրէ լաւացնել, քան թէ խկի չունենալ“ :

Дозволено Цензурою Тифлисъ. 3 Юля
1876 года.

Յառաջ Կան Տեր պատասխանը դուրս բերենք
այստէլ, որ Բաբբանոս դաստատարով,
ըէ ինչ է

ԿՈՒՏԻԿԱՆՆ՝

Ե Լ

Կորս վերայ ունեցած Տեղնիչ շտաբի

ՀԱՍԿՅՈՂ ՈՒԹԻՆԸ :

Պիտենարով վերևում արձանացուցած բառին տեղեակ լինելուց առաջ եկող անպատում օգուաները, հասկանարով, որ նորա այդ ամեն վերքերի սպեղանիք համարվող ոյժի, դեռ շատերիս համար մթութեան տակ ամփոփված լինելը — մեր կարողութեան չափ, բողբոլիլն բնական և ինքնուրոյն զատմունքով, կաշխա-

(1) Ծան. Արիտիկա — յունական κριτική (բուքից — κρινω (սառ. էլ. ներ.) նշանակումէ — դատարան է՛մ, դատ է՛մ տանում, վիճում է՛մ :

աներ այստեղ ծանօթացնել ընթերցողին նորա
 հետ. և այս, եթէ ոչ նորա տեխնիկական ա-
 մեն մանրամասնութեամբ, զոնէ մասնաւոր նշա-
 նակութեամբ: **Մ**հա՛ թէ որպէս.—

Մեր առաջն կանգնած է իրական աշխար-
 հը—այն բանը, որին մենք կէանք ենք անուա-
 նում: **Մ**յառեղ, այդ միշտ շարժուն ովկեանի
 մէջ ամեն—որ գործում է. ասել է թէ և ա-
 մեն—որ շարժողութեան մէջ է, և ամեն—որ
 (այսպէս ասած) ենթակայ է մի գործիչ և յա-
 ռաջ վանող հոսանքի: **Մ**ենք, ուրեմն, գործու-
 մենք, մտածումենք թէ մեզ ինքեանցս և թէ
 ընդհանուրի համար: **Ա**րքնն ղխալածուամ
 մարդ, որպէս ղթառատ հայր, իւրեան բաղդ է
 համարում տքնիլ և խօսքով և գործով: **Ա**-
 լւրեմն, այն տեսակ մարդեր, որոնք չարչարու-
 մեն ընդհանուրի մասին, երկու տեսակ են —
 ասողներ և կատարողներ:—

Ահա՛ յետին ղնուորից մինչև թաղաւո-
 րը—մի շղթայ՝ կազմված ամրակազմ՝ օղերից—
 հսկումեն ընդհանուրի անդորրութեանը, որին
 խանգարողն ղինաց նորանք պատրաստ էին թա-
 փել բոց և արխն . . .

Սորանք կատարումեն գործով այն, ինչ հար-
 կաւոր է մարդկային ընկերութեան ապահո-

վութեանը: **Ս**ողնները որոնք են:— **Հ**անձա-
 լեղ անձներ, մարդեր, որոնց մենք անուանա-
 կոչումենք — **Գ**րողներ: **Մ**յալիսի օղիազգեաց խո-
 հական գլուխներ, ժամանակի պահանջման հա-
 մեմատ, զուրս են գալիս քարոզել ընութեան
 բեմից մարդի որդիներին այն, ինչով կերակրը-
 վումէ խիղճը: **Ս**ւ սորանք, այս աստուածները,
 ղնուորներ են. միայն ղէնքի տեղ **Գ**րող կարծի-
 ներ: **Ս**որանց ղէնքի ծնունդը, ոչ թէ մահն է,
 այլ երես գունաւորող մի ամօթ, աչեր ծախող
 լոյս, սիրտ կկող ձայն, կամ ընդհակառակն —
 ղմայլեցնող խոստովանութիւն, ինկահոտ դա-
 տաստան . . . **Ս**որանց ղէնքի շառաչելնը լւեց-
 նումէ հոգի, ընդարձակ ասպարէզ տալով մտքին:
Միաքը կերպաւորումէ իւր վարձը — կամ պար-
 ղև, կամ պատիժ: **Ս**ւ այդ հսկայական ղէնքերը
 մարդկութեան մէջ եղած ամեն անվայելութիւն-
 ները արմատախիլ առնելու և սորանց տեղ կան-
 ղնեցնելու համար — երկնային ձմարտութիւն,
 մաքրութիւն խղճի և, որ մեծն է, սէր — շատ
 և շատ ղարկվել են անարգանքի վեմի ձակա-
 տին, բայց երբէք փշրվել նորանցով . . . **Ս**ո-
 րանց, մարդկութեան այս փարոսների վարձը
 այնչափ մեծ է, սորանց անունը այնքան պաշ-
 տելի, այնքան ղրաւիչ, որ յաճախ և յաճախ

պիտի գրգռէր պատվապաշտ մարդերի անզար-
 զացած սրտերը: Այլ իրաւի «Բր» այս մազ-
 նիսական յատկութիւն ունեցող բառը շատ
 անձների կամեցաւ տեղ ունենալ թաղի վերայ:
 Այս, նա գտանուամէ և այսօր իւրեան իսկու-
 թեամբ չճանօթ, բայց իւր պատվի ցօլանքից
 զմայրող սիրահարներ . . . Այժմ այս այսպէս լե-
 ներ, ուրեմն պէտք է կարծէինք, որ մատենա-
 գրանկան սուրբ գործի մէջ երկնատուր գրիչը
 պիտի ընկնէր ձեռքը — որպէս հանձարեղների,
 նոյնպէս անընդունակների, որպէս արժանա-
 ւորների, նոյնպէս և անարժանների . . . — Այս-
 պէս էր և է յատկապէս: Ուրեմն, տաղանդա-
 ւոր մարդերին արժանի պսակը պիտի շաղախ-
 վէր ստվերակերպ անհասների գոյացրած ցեխի
 մէջ: Ուրեմն, նա, որ աշխատել է, նա, որ չը-
 գիտէ աշխատանք, կամ նա, որ ձիրք ունի, և
 նա, որ այդ դրամով է ձեռք ձգում — սորանց
 ողջի պատիւը, անունը, յաղթանակը, վարձը
 պիտի թափառէր անեղօ, փօշուպատ մթնոլոր-
 դի մէջ . . . — Այս, եթէ միայն ճշմարտու-
 թիւնը հնար չունենար անարգանքի տղմոտ
 կոյտից բարձրանալու, եթէ չունենար զօհեր,
 որ իւրեանց արեան հեղմամբ անզամ պատ-
 բաստ էին յայտնագործել նորա սրբութիւնը:

Սորա համար մարդկային հասկացողութիւնը
 ստեղծել է մի բաւարար դատաստան, մի ուղ-
 զադատ կշիռ, որ յայտնի է լուսաւորված աշ-
 խարհին «կրիտիկայ» անունով: Սորանով, այս
 անխալ չափով, որոշվումէ բարին վատից և
 հասկացվումէ ամեն իրի սատիճանը, տեսակը:
 Այս դատաստանի տակ գտվումէ ոսկին պղն-
 ձից և տրվումէ արժանաւոր դին մարդարիտին
 ու զիզկին²⁾: Ուրեմն ճշմարտութեան միակ
 այս պաշտպան դատաստանը իւր մէջ պատկե-
 րացնում է աստվածական սրբութիւն և ամ-
 փոփում է մի վսեմ իսկութիւն: Այլ ևս ինչ
 պէտք է երկարաբանութիւն: Արեւը է միթէ
 մարդկեղէն բառերով բացատրել վեհութիւնը
 այն բանի, որ պարասյումէ արդարութեան ճշ-
 մարտութիւնը և ճշմարտութեան արդարու-
 թիւնը յայտնագործելու . . . Նա մի իրողու-
 թիւն է, մի հնար է այնպիսի դերակատար վը-
 սեմութեամբ, որին մերձենալու համար պա-
 հանջվումէ մաքուր ձեռք և անաչառ լեզու:

(²⁾ Ծան. Այսպէս անուանվում է զիւղական
 բարբառով հրաբուխից արտաշնչված այն հալ-
 վածքը, որ ստանութեան ձեռքով արեղակի
 տակ ստանում է ցօլացող յատկութիւն:

Վա իւր բովանդակութիւնով այնքան արժանաւորութիւններ, այնքան բարիք ունէ, որ այս մասին, կարծելի չէ, թէ լիօրէն ըմբռնէ նորան սցծմեան մարդկեղէն հասկացողութիւնը: Ազգայերի շարունակութիւնը նորա վերայ, որպէս առաջնակարգ գիտութեան վերայ, պիտի զմայլել տայ մարդկութիւնը:

Մեանքի մէջ, ընտանիքում, յայտնի է ամենիս, թէ որչափ յարգելի է այն խոհական ծերունին, որ համեատութեամբ ցոյց տարուց յետ իւր գերդաստան անդամերից մինի պակասութիւնները և հարվածելով դորանց, վերջում, յայտնի է կացուցանում երջանկութեան այն սկզբունքները, որոնց անուանումներ մենք բարդութեամբ կոչուինք: Այլպիսի, ըստ երևոյթին անտաշ, խօսքերը հասկացողների առաջև եռում են որպէս կարգ անդին գոհարների կամ որպէս անձրև կիզված ձեզք — ձեզքված հողի համար... Օտրունին թվում է մեզ էակ, որ հաստատում էր թէ այդ ինքը գետեղում է իւր մէջ վերնականի յատկութիւններից մինը: Այս սովորական ընտանեկան կրիտիկան ամենիս յայտնի է «խրատ» անունով:

Իսկական կրիտիկան նման է մի խրատի, իսկ անաչառ կրիտիկոսը խոհական ծերունիին:

Չբաւականանա՛նք սորանով! — կրիտիկան մի առաւել անպատում, առաւել գերամիտ ունէ է: Վա, անաչառ մարդի գրչի մաքրազարդութեամբ, հարվածում է ամեն կեխտ նախ իժեան խայթոցով և ապա ցոյց տալիս ճշմարտութիւնը մի քաղցրաձայն երգէհօնով: Պարզ — իսկական կրիտիկոսի գրիչը միտլած է և թոյնով և սիրով: Բայց այս երկու հակառակ նիւթերը ճիւղաւորվելով դոյաջնում են, ներդաշնակ շաղախվածքի, անուշահոտ բուրմունքը:

(Օրինաւոր կրիտիկան պակաս զօրութիւն չունէ, քան զօրութիւնը այն ինքնակալի, որ տոկուն ջանահարութեամբ աքնում է իւր հրպատակների յառաջադիմութեան համար: Վա անպատում արագութեամբ կանոնաւորում է մի ամբողջ հասարակութեան կեանքը. կեանքը, որ արդէն բարոյական անկումի էր չասել: Վա յետ է կանգնեցնում տարտարոսի ակից անզրոյզ զոհին և ցոյց տալիս մոլորված մարդին երկրաւոր երջանկութիւնը: Վա, մինիս թերանման և զուցէ թէ, աննկատելի պակասութիւնը, կերպաւորելով որպէս մալխոյ (պարան), զգուշացնում է, ճշմարիտ գերազանցութեան հետ զեռ չձանօթ ամբոխին, ապազայի սխալներից: Մի յեղափոխութիւն, մի ցիվիլիզացիա միշտ

կարօտ է զօրեղ կրիտիկային իւրեան գործի դարձնելուն: Աւ եթէ դորանք, կեանքի այդ յառաջադիմութիւնները, չսխաղանցութեան հասանելով շեղվածքների են հանդիպում. կրուկին կրիտիկան է, որ Ֆիլիսոֆայական գաւազանով ցուցանում է դորանց չափ ու սահման:

Աւ այսպէս, կրիտիկան, սկսած վերջին մարդից մինչև մարդերին սահմանափակող էակը, սկսած գիւղացու օջախի մօտից մինչև արքայական պալատը — ամեն տեղ իւր բարոյական զօրութիւնով հաւասարեցնում է հողի կոյտեր, խորթութիւններ, համեմատութիւններ. . . Աթէ այսօր տեսանում ենք մենք ազգեր զարգացած աւելի բարձր աստիճանի վերայ, այս ևս կրիտիկայի հնարաւորութիւնն է. նշանակում է թէ այդ ազգերի մէջ նա մուտք է գործել իւր ամեն եռանկունով: Իայց որչափ մարդկային հանձնարը դարերի հոսանքում, կարծենք, թէ պիտի կատարելութեան հասանէ, նոյնչափ, զուցէ առաւել ևս, կարծելու է կրիտիկայի մասին, ըստ որում վերջինս մեզ չէ ներկայացնում այլ ինչ, եթէ ոչ կատարելութեան առաւել բարձր և դեռ անյայտ ծայրահեղութիւնները: Աւ այն միջոցում, երբ գիտութիւններով բեռնաւորված քաղաքագետը, կարճ շրջահայեաց լինելուց յետոյ,

իւրեան կատարեալ է կարծում, — այդ միջոցում ևս կրիտիկան ճիճաղումէ նորա վերայ: Կրիտիկան, խորին մտածողութիւնից յետ, ումի՞ն արդեօք ըմբռնելի չէ կացուցանում այս միտքը. այս արդարացի արտայայտութիւնները —

Աս մայր լինելով ամեն կատարելութեան ինձնով կարող է պարծենալ որպէս մի մարդ, նոյնպէս և բոլոր աշխարհը: Աւ յիլաւի մարդկային միտքը, կարծես, ոյժով սանձը յետ դրած, բոլորովին համեմատ այս կարծիքին, գոռումէ. «Առանց կրիտիկայի չկայ գերազանցութիւն! և այն բանը, որ չէ հիմնված առողջ կրիտիկայի վերայ, որ չէ ենթարկվել նորա խրատութեանը, որ չէ խոստովանել նորա ահեղութիւնը — նա թերի է, նա չունէ արժանիք. ըստ որում կրիտիկան մի բովարան է, որի մէջ հարկող զանկվածը ունէ ոսկիի արժանաւորութիւն»:

Մենք կրիտիկային տալիս ենք այսպիսի վերստեմ, բազմադիմի նշանակութիւն անուանելով նորան — «Արդարութեան պաշտպան», պատճառ. նա է մի խիստ և սրբազան գործ, մի կիզուն, եռացած երկաթ, որ մաքրազարդելով ամեն կեխոտութիւններ, պարզւում է սորանց տեղ այն, ինչ վայել է կատարելին: Ուրեմն,

եթէ կրիտիկայի գործը է — փախչել սխալանքից, կանգնել ճշմարտութիւն, զին հասանել արդարօրէն, ապա որպիսի զրիչ կարող է լինիլ նորա թարգմանը: — Ո՛հ. շատ քչերը և զրութէ ընտրեալներից ընտրեալները: Դորանք պիտի լինին այնպիսի զրիչներ, որ անաչառութեամբ, առանց խոտորնակի, միօրինակ հոգեկան խաղաղութեամբ, ամեն ինչ խօփէն յայտնարանեն. զրիչներ, որ, այդ վե՛սմ առարկային շօշափելուց առաջ, կեզրօնացրած լինին իւրեանց մէջ կրիտիկայի սիրելի կողմերը. զրիչներ, որ, ճշմարտութիւնը նախ քան ուրիշներին ցոյց տալը, այդ հասկացրած լինին իւրեանց և վերջապէս զրիչներ, որ մարդկութեան օգուտը, այս սրբանուէր հիւանդի պատիւը չխառնեն մասնաւոր շահերի հետ: — Ահա թէ ինչ է կրիտիկան, թէ ինչ բանի համար գոյացել է նա³⁾ և թէ ինչ պատրաստութիւն է հարկաւոր նորան ձեռնամուխ եղողին:

Այժմ, երբ շատ թէ քիչ բան հասկացաւ ընթերցողը մեր արտայայտութիւններից, նորա

(3) ծան. Կորա գոյացութեան պատճառներից մենք պատեղ դուրս բերեցինք ճշմարտութիւնը, որի և պաշտպանը կոչեցինք նորան:

ուշքը դարձուցանում ենք հարցի երկրորդ մասի վերայ, այսինքն, — «Կրիտիկայի վերայ ունեցած մեզնից շատերի հասկացողութիւնը:

Գրիչը դեռ քայլ չարած այս մասին, մեր երեսը պատում է մի ամօթխածական կարմրութիւն, և, մինչև անգամ, պատրաստ ենք ասել կարծօրէն, թէ մեզնից շատերը բոլորովին, կէտ առ կէտ, հակառակն են հասկանում այն ամենը, ինչ յիշեցինք վերևում. բայց, անբաւական չկացուցանելու համար ընթերցողին, պահպանենք մի փոքր ընդարձակութիւն:

«Կրիտիկայ» խօսքը մեզնից շատերի համար ունի այս նշանակութիւնը — հար կամ միջոց իւրեան փառք ձեռք բերելու, խի ներհակվողին բարոյապէս մեռցնելու⁴⁾:

(Խսկութեանս խոստովանող կլինին նաև նորանք, որ լաւ տեղեակ են մեր զրականութեան համար (?) ինքնակոչ «խալտափառան համոզմունքի տէր գործողներից շատերին»):

(4) ծան. Այսպէս խիստ վարվելով մերայինների հետ, չենք ուրանում նաև, որ կան տրանց մէջ կրիտիկային խօսկութեամբ հասկացողներ, զիտեցողներ: Բայց սորանց թիւը շատ քիչ է. համարեա՝ 1, 2, 3, 4... այսօրան:

Այս համոզմունքը հիմք ընդունած, մեզ-
նից ամեն մինը, որ լաւ թէ վատ գիտէ տա-
ռաշարութիւն, որ գիտէ մտազարկի արհեստը, թէ
և երազում անգամ լած չլինի — ի՞նչ է կրի-
տիկայ, կրկին հաւատացած լինէք, կզրէ դո-
րա մասին. կզրէ մանաւանդ հետեւեալ միջոց-
ներում. — առաջին պայման. երբ նա մինի հետ
քէն ունէ; երկրորդ. երբ նա կամենում է իւր
անձնաւորութիւնը յայտնի կացուցանել հասար-
ակութեան առաջև — ասել է թէ — մտապն-
ծութիւնից; երրորդ. երբ խիստ հնապաշտ է,
և չորրորդ. երբ տատանվելով բողոքի ձեռքում
օտարին առաւել բարւօքված վիճակում է տե-
սանում — այսինքն — նախանձաւորութիւնից օ
Բայց, երբ ասում ենք «զրում է» պիտի խմա-
նաք թէ որպէս է զրում :

Աստուած ազատի! լաւ է չլէք. հակառակ
զիպվածում ձեր եւտաաֆեան խողովակից օ)
կամ նոյն խակ լաբիրինթից օ) դեռ երկար չն
ջնջվել հեաքեր անկարգ, անհամ աղերի, ձայ-
ներ շուկայեան խօսքերի, յիշոցների, երգիծա-

(օ և օ) ծան. Այսպէս անուանվում են ականջի
ներքին մասը, կամ, «ներքին ականջ» կազ-
մող մասներից երկուսը :

բան պէտտ — պէտտ՝ բառերի. . . Սա է մեր կրի-
տիկոս կարծվածների շնորքը: Այլ կերպ ան-
կարելի էր, երբ այդ «իսկ — մի» առնողների
կարծիքով, (իբրև յաւելված վերևի յիշածնե-
րիս), կրիտիկայ նշանակում է յիշոցաբանու-
թիւն . . .

Այսպիսի մի վարեցողութիւն, մի զործ ի
զուր մենք անուանում ենք կրիտիկայ. նորա
էութիւնն անգամ վնասակար է որեւիցէ, հա-
րուստ թէ աղքատ, կամ աւելի վերջին տեսա-
կիս պատկանող մի զրականութեան . . . Խորին
մեղանչանք, և, եթէ ասենք ուղիղը, կատար-
եալ մարդասպանութիւն է մեր այսպէս վար-
վիլը թէ դէպ մարդկութիւնը և թէ դէպ նորա
հոգեկան թանգարանը, որին ասում ենք զրա-
կանութիւն . . . Օ, ազրելի խաղ !

Հետեանքը այս ամարդ վարմունքի ահա թէ
ինչ է լինում. — Նոր, դեռ անփորձ, զրպար-
տութիւններ կրելու անընդունակ մի երիտա-
սարդ, որ, զուցէ թէ և Ապոլոնեան տաճարի
յարկի տակ տքնելով, ձեռք էր բերել յասուկ
զիտութիւն, ահու զողով ոտքը փոխում է զը-
րականութեան ելեէջքից դէպի մուտքը նորա
հրաշաղօր ասպարիզի: Այս առաջին անգամ,
ուրեմն, մատենադրոսկան սուրբ զանձանակի մէջ



փորձ է առնում ձգել մեծ ջանահասարակութեամբ ձեռք բերած լուսնն:

Չգեղ նա ահա. բայց «աչքդ բարին տեսնե!» խկոյն երևան են դուրս գալիս մի, կամ աւելի «գահրատարներ» գրչով, որի ծայրից, ասես թէ, նախասահմանված էր թափվել կծու բառեր միայն . . . պ. Արակոս, քո գրվածք ոտներ չունէ. մի աչքը խաւար է. նա հիւանդ է . . . «կամ» լաւ կլինէր, եթէ պ. Արակոսը ձեռք վերցնէր իւր յիմարութիւնները ծախելուց . . . ու դադարէր անմիա գրիչ պար — տծելուց . . . «Նհա՛ ձեզ այն, ինչ յաճախ մեր տեսանելի կրիտիկաները վերջացնում են իւրեանց խօսքը:

Այսպիսի մի փոքր գատաստանից յետոյ ի՞նչ է մնում մեր երիտասարդին: — Ամա՛ մշտնջենաւոր վէճ՝) բանալ կրիտիկոսի հետ, և կամ, որ

(?) Ծան. Մեզ կասեն. — «Եթէ իրօք օրինաւոր կրիտիկան մի վիճարանութիւն է, ապա շատ արդարացի են մեր հեղինակները (բառիս ընդհանուր նշանակութեամբ), որ իւրեանց թերթերի երեսը լցուցանում են զուտ և խիստ վիճարանութիւններով»:

Արդարաբանա՞նէ. — Արիտիկան վիճարանութիւն է; բայց նա վիճում է ստութեան և

1006
29106

ուելի վատն է, վհատվելի դարձրի զբանալ թեան գործավարութեան մէջ մուտք գործելուց, սառիլ և, ինքնակամ կերպով՝ փոշիով ծածկվել նորա երկնապարզե աազանդը . . . Այս դիպվածներից որպէս առաջնում, նոյնպէս և վերջիններում ընդհանրութիւնը ստանում է օգուտի տեղ վնաս . . .

նչ անհասարակեան դէմ: Էլքելով սխալը, նա, անմիջապէս, մասնանիչ է առնում զուտ ճշմարտութիւնը: Իսկ ինչ վերաբերումէ մեր հեղինակների միմեանց հետ ունեցած վէճերին, զորանք, որպէս երկինքը երկրից, այնպէս հեռու են «կրիտիկայ» ասվելուց: Ինչպէս կիրք են, նախանձ են, այլ ևս ոչինչ: «Մի» անձնաւորութիւնը, պատիւ ձեռք բերելու համար, վիճում է «մի» անձնաւորութեան հետ և այսպէս շարունակվում է երկուսի մէջ իրի պատերազմ . . . Թէ սա կրքի պատերազմ է, կարող էք հասկանալ նորանից, որ այս պատերազմներից ոչ մինի շարունակութիւնը չէ հասանում ճշմարտութեան: Ստութիւնը գուրկ է ճշմարտութիւնից: Մի բանի մէջ երբ չկայ ճշմարտ կատարելութիւն, ուրեմն այն բանը անօգուտ է: Օրինակ ընթերցողին ի՞նչ շահ, եթէ ես իմ գրքի մէջ մինին անուանում եմ —

Այսպէս էր կարծիքը ուսման (?) դասի
Գանք այժմ դէպ ընդհանուրը — այսինքն —
ժողովուրդը:

Իսկո՞ղ կրիտիկայ . . . Ողորմելի՛ բառ, անունդ
տալով զիտե՞ս մեզնից շատերը ինչ են հաս-

„յիմար, դաւաճան, գո՞ղ“ . . . Սամ մինը
ինձ պատասխանում է — „օխսկուրանտ, զիժ,
աղուէս“ . . . Այս շուկայեան խօսքերը վա-
յելն միայն խոգարածներին: Մորանք բնա-
օգտատու և երբէք հաճելի չեն զարգացած
ձաշակին, այլ հետառհետ պիտի վայր ձգեն
իւրեանց գործածիչներն վարկը, պիտի ցու-
ցանեն ապաղային սորանց տհաս լինելը և
մի՛ բան, որ գայթակղութեան վիմի ճակա-
տից ոչինչ կացինի հարվածով պիտի չքեր-
վի, — այսինքն — „ժամավաճառներ“ . . .

Այսպիսի ուղղութեան տէր գրիչը և այս-
պիսի բառերով լի գիրքը, ոչ միայն անպէտք,
այլ և վնասակար է ընդհանրութեանը . . .

Չյուսանք թէ դորանք գոնէ մի օր պիտա-
նացու են մեզ մեռելութիւնից կանգնելու հա-
մար . . . Միւրքը ախտ է, իսկ ախտը — մահ.
մահացածը չունէ կենսազորձ զօրութիւն,
հետևապէս չէ կարող բժշկել բարոյապէս
ընկածին, նա, որ գուրի է բարոյականութիւ-
նից, և որ վատն է, հասարակութեան առաջև

կանում. — Էթեթանու-նիւն, խայտառիւ-նիւն. —
այս բան: Իսկ եթէ դու մի բան կրկին նշա-
նակում ես նորանց առաջև՝ այդ անշուշտ է
Տասխարայու-նիւնը . . .

Այս կարծիքի ազդեցութեամբ, այս համոզ-
մունքի շնորհիւ հայ — մարդը կրիտիկայի տակ
ընկած մի գրքի մասին (թող այդ կրիտիկան
դոյն գրքի լաւ և օգտակար կողմերի լինէր ար-
տայայտութիւն) կարծում է թէ՛ նա արդէն
կորցրեց իւր անունը, յարգը, նշանակութիւնը

չունէ այն բանը, որ առաջին զանձն է մի
գրչի համար. — դա է յարգանք: Մեր հե-
ղինակներից շատերը կանգնած են այս կէտի
վերայ:

Այս շոշափելի իրողութեան բացէ ի բաց
մեր յայտնարանութիւնը անշուշտ պիտի վա-
ռէ կրքեր, պիտի շարժել տայ սրտեր. լե-
զուններ, գրիչներ, և, գուցէ թէ, սրեր ևս . . .
Իայց մեզ համար նշանակութիւն չունէ
կարգալ մի թերթի ճակատում „ստութիւնը
պաշտպանված“ վերնագրով յօրված, ուր
(գուցէ) կարծեցեալ մի նոր կրիտիկոս փորձ
կփորձէ ծեփել (կոծկել) վառվող լոյսի ել-
քը . . . Այս յուսալի է: Մեր Տարգարէն-
նիւն համար ուրախ կլինինք. — այլ ևս ոչ
ինչ!

և մինչև անգամ, բովանդակութիւնը . . . Այլ
 ևս նա զիրք չէ համարվում, բայց մի յանցա-
 ւոր, կուսոր, որին ձեռք առնելը, մերձենալը
 անպէտք է համարվում . . . Մենք չենք նա-
 խատում դեռ ինքնուրոյն հասկանալ չկարողա-
 ցող ամբոխին: Այս, հաստատ դատողութեան
 տէր չլինելով, կամ պիտի շեղվի ճշմարտութիւ-
 նից և կամ ենթակայ լինի օտարի համոզմուն-
 քին, խօսքերին . . . — Ուրեմն մեղաւորը խրա-
 տատունները են . . .

Հանգամանքների այս դրութեան մէջ և
 դործի այս պատկերի տակ ի զուր է կարծիք,
 թէ մենք կհասանենք կատարելութեան
 Չկարծենք, թէ, առանց բարին չարից զատե-
 լիչ կարողութիւն ունենալու, մի օր կլինինք
 երջանկութեան գրկում Չհաւատանք, թէ,
 առանց օրինաւոր կրիտիկայի, խաւարից դէպ
 լոյսը կդիմենք . . . Ատտակ է մտքից անցուցա-
 նելը, թէ, ամեն — որ «իչ քն քելւմ», կհասնենք
 այն նաւահանգստին, ուր տեղ թագաւորող
 հանգստութեան դրօշակը կրում է վերան —
 «Ատտարելութիւնը (կրիտիկան) հաւասարական
 երջանկութեան ծնողն է»:

Արիտիկայի մասին մերայիններից շատերի այս
 կերպարանքով ունեցած հասկացողութիւնը

գուշակել է տալիս զգայուն մարդին դալոց ճը-
 մեռները, և աւելի պարզ, լուսաւորութեան
 շուտաքայլ ընթացքից մեր յետ մնալը . . .

Մի հնար! Այս մասին փրկութիւնը կա-
 յանում է կրկին մեր կարծիքական կրիտիկոս-
 ների ձեռքում: Խօսք չկայ, նա, որ ընդհան-
 րութեանը մնաս տալու համար հնար էր գը-
 տել, այդ մարդը անշուշտ միջոց կգտնի նորան
 կրկին անգամ կանգնացնելու: Այս յուսալի
 է այն միջոցում, երբ մեզնից ամեն մինը, խո-
 րին շեղահայեաց լինելուց յետ, անաչառօրէն
 ցոյց կտայ ամենիս իւր սխալը և սորա դիմաց
 դարման, որ բժշկում է համանուն վէրքը: Ար-
 իտիկան շատ անգամ չէ հանդիպում դժուա-
 րութիւնների, եթէ մենք չփակեինք նորա ըն-
 թացքը: Այս, անկողմնապահ հոգով գրուած
 կրիտիկան, գերակատարութեան հասուցանող
 մի զաւազան է, իսկ սորա հակառակ կաշկան-
 դող դարան է շուկայեան այն երգիծաբանու-
 թիւնը, որ անունով միայն ասվում է կրիտիկայ;
 սա ինքն ըստ ինքեան մի զարշահոտութիւն է,
 մի տնդլի — պիպօղութիւն է . . .

Որպէս ապացոյց մեր խօսքին բերենք այդ
 տեսակ կրիտիկաներից մինը. նա մեզ կճառայէ
 օրինակի տեղ: Ահա այն: —

Ներելով ինձ, յարգելի Րաբբունի, թողէք, որ այդ վսեմամիտ դատողութիւնների շարունակութիւնը վերջ ստանայ իմ բերած օրինակով: Եւ սորա մէջ ձեր պաշտած կրիտիկան, դատաստան է պահանջում այն մարդի դէմ, որ չհասկանալով՝ ինչութիւնը կրիտիկայի չարաչար մեղանշելով է գործ ածել նորան . . . Բայց, յարգելի տէր, կարծեմ զիջողութիւն կառնէք, որ ես՝ հասարակ հայերէն չիմացողին հասկանալի լեզվով յայտնեմ այս մեղանշանքը. ոչ թէ ձեզ, այլ «Թռչնիկ» գրքոյկիս կրիտիկայի տակ ձգող

պ. Ս. Օ. Ե շ Ե ն Ի Կ Ե Ե :

Ուրախացիր, ո՞վ մարդկութիւն,
Վարդալով այս տողերը.

Եհա տես ինչպէս են քննում
Քո միջի անդամները:

Տես Թռչնիկ 73 էրեւր.

«Մշակ» լրագրի 16-րդ համարի բանասիրական մասը կարդալով գտանք նորա մէջ «Երևանի գրականութիւնը» վերնագրով մի յօդ-

ված: Եյդ դուք էք, պ. Օլիլնսկի, գուք, որպէս մի ուու քննութիւն անում Երևանի գրականութեան վերայ յառաջ բերելով ձեր նկատողութիւնները իմ «Թռչնիկ» գրքոյկի մասին: Չենք զարմանում. որովհետեւ դուք յայտնի էք արդէն Երևանին ձեր գործունէութիւնովը, որոյ համար նա ձեզ արժանացրեց և միանգամայն սեփականացրեց «Երդուեալ կրիտիկոս» բարձր անունը. ուստի այդ ըստ ձեր կոչման պարտաւոր էիք անել . . .

Տիտղոսիդ ծանօթանալուց յետոյ այժմ խօսանք յարձակմունքներիդ վերայ. «Եստ ցաւելով յայտնում եմ ձեզ — ասում էք դուք — որ ձեր Թռչնիկը հիւանդ է»: — Հիւանդ է. այսինքն բժշկի կարօտ. այն էլ ձեզ պէս դօքտօրի . . . Ոչ, պարոն, նա հիւանդ չէ. քաւ լիցի: Իսկ եթէ ձեզ նա հիւանդ է թուել, դժուար չէր առողջապահական կանոններին համաձայն թեթեւ դեղօրայքով նորան բժշկել, այլ ոչ թէ նորափետուր Թռչնիկին հէնց առաջին անգամ ըմպել տալ ձեր լուծողական դարմանները . . . Երդարեւ ոչ միայն մի Թռչնիկ չէ կարող առանց զզուելու ընդունել այդ, այլ Վասպուրականի արծիւն անգամ . . . Եյդպիսի մահաբաշխ դեղեր շատ են տուել գրող-

ներին. բայց վհատիլ. նորա չեն վհատում երբէք ինչպէս և իմ թռչնիկը, որ յոյս ունի թռչուն դառնալու: Նա թէև չէ կարող ձեզ պէս արծրվանալ, գոնէ առ այժմ մորեկ ջարդող սարևակ դառնալու յոյս ունի . . .

Հին հոգին — գրում էք դուք — ինչպէս երևում է երկաթուղու մէջ է թողել կամ դիլիջանի անտառին և ծաղկաւէտ լեռներին պահ է սուել: Ինչ երևելի լողիկայ?! հոգին թողել է . . . հոգին պահ է սուել . . . — Ուրեմն մարդս կարող է ըստ իւր կամոց, լինիլ և՛ հոգեոր և՛ անհոգի (?). Ինչ և իցէ, եթէ այդպէս ընդունենք ևս այնու ամենայնիւ դուք սխալվում էք: Նա, իմ հոգին երկաթուղու մէջ չէ . . . Իկցուք, հետևելով ձեր սխալ կարծիքին, ասենք (խաթրիչուն), Իլիլիջանի անտառում և ծաղկաւէտ լեռաներում լինի: Իսկ դուք մի փոքր ցած ձեր կրիտիկայում (թէև այդպէս ամօթ է անուանել) յայտնում էք — «Ով բաւական չէ իւր հոգուց թող Երևան գայ. հէնց որ երևի նորան Մասիսը, նա կարող է ոգևորվել նոր հոգով» . . . Շատ բարի. Եյս միևնոյնը հարց անենք ձեզ. 1873 թուին երբ անբաւական լինելով ձեր հին (բառիս իսկական նշանակութեամբ) հոգուց զալիս էիք Օչա-

բաթալից Երևան նոր⁸⁾ հոգի ստանալու համար, ասացէք խնդրեմ, ուր թողեցիք ձեր հին մաշված, պառաւած հոգին . . . Միայն, խնդրեմ, ինձ եղիպտական — կրօնական պատասխան չտաք:

«Նրաշալի ոյժ ունէ Երևան» ասում էք դուք: (Եյն էլ այն Երևանը, որ այսօր պարծենում է ձեզ պէս կրիտիկոսներով) . . . Եյն, պարոն, նա հրաշալի է: Եւ շատ ուղիղ է նորա մասին ձեր այս խօսքը — «Երևանը, ինչպէս երևում է, պատրաստվում է նոր ոյժերով»: — Պատրաստվում է նոր ոյժերով — այսինքն և ձեզանով:

Գուրջի Նավե . . . Եփտոս չէ՞ այս երկնային անուներ, որ սեղմվում է ձեր գրչի տակ . . . Նորա վերայ դուք որևիցէ հասկացողութիւն ունիք: Մի՞թէ չզիտէք նորա վերազանցութիւնը — թէև նա իշխակայ իսկ դուք провинциальный учитель⁹⁾.

(8) Ծան. Աեցցէ Երևանը, որ հոգեփոխութեան տեղ է համարվում ձեզ պէս անհաստատ ոգի ունեցողների համար . . .

(9) Ծան. Եյսպէս է անուանում ինքը իւրեան ուսուսական գրականական ասպարիղի մէջ:

Սորանից յետոյ իւր թեթեամտութեամբ ուշ-
քըս գրաւումէ ձեր այս խօսքը. ողևորված բա-
նաստեղծիս „աչքին առաջ երևումէ ձորի մէջ
տարածուած Երեանը և յետոյ 17000 Ֆուտ
բարձրութեամբ Մասիսի զագագթը“ : Երկու սը-
խալից մի պատասխան անհնարէ : Լուծենք
ջոկ ջոկ. — ‘Կախ’ թէ ես առաջ Մասիսն եմ
տեսել յետոյ Երեանը, դուք ապացոյց կարող էք
համարել թռչնիկի ծանօթութիւնների մինի
այս տողը — „... երբ վերադառնումէի Մոսկ-
վայից ... երևեցաւ ինձ Մասիսը իւր ձիւնա-
փայլ զագագթով, (Նարատեան դաշտը և Երեան
քաղաքը „ (տես 113 եր.) երկրորդ՝ ասումէք
Մասիսի բարձրութեան համար 17000 Ֆուտ :
Մի՞թէ ուղի՞ղ . . . մի վստահանաք այդպէս
շուտ պատասխանել : Գիտացէք, որ Մասիսը մեզ
յայտնիէ 17000 ի տեղ 16,000 Ֆ. (որպէս ա-
պացոյց տես 38 եր. география Симеонова
8 изд. 1870 г. որով ուսանում են և ձեր ա-
շակերտները) . Սորանից յառաջ ենք բերում և
այս, որ պարոնի խօսքով Մասիսը վեց տար-
վայ ընթացքում, քի 1870-ից մինչև 1876 թի-
ւը, 1000 Ֆ. բարձրացել է. ուրեմն 60 տա-
րուց յետոյ Մասիսի բարձրութիւնը կհասնի
27,000 Ֆուտի : Երևելի գիւտ ! Մենք խոր-

հուրդ կտայինք պարոնին այդ գիւտը ներկա-
յացնել 1878 թվի Փարիզու համաշխարհային
հանդեսին :

Խօսենք այժմ ձեր Երեանի տրոպիքական(?)
շոքի մասին : Մի՞թէ բաւական չէ — ասումէք
դուք — որ Երեանի տրոպիքական շոքը, իւ-
բաբանչիւր տարի համարեա 8 ամիս մեզ ան-
խնայ գիղղումէ և բորբոքում : Երեան գուցէ
ձեր վառ երեակայութեան շնորհիւ ստացել է
այդպիսի տրոպիքականութիւն, ապա թէ ոչ՝ նա
այդպէս չէ՛, այլ ոչ աւելի քան 3 ամիս. ուրեմն
մնացած 5 ամիսը կարողէք պահել ձեզ հա-
մար, նա կտաքացնի ձեր սառած պօրտըՖէյլեյի
թերթերը :

Մի քանի տողերից յետոյ յայտնումէք „եթէ
այդ բոլորը (քի պարոնի նկատողութիւնները)
ընթերցողը ճաշից առաջ կարդայ, կարողէ նորա
ախորժակը բոլորովին փակվել ? “ Փառք Լու-
սուծոյ, հասկանումէք ինքներդ էլ, որ այն աս-
տիճան պէտքէ լինէր անհամ ճեւուածոյ ձեր
գրուածքը, որով բացի այդ՝ դեռ հաց չկերած
սոված քաղցած խեղճին քնի կհրաւիրէր :

Եթէ պարկեշտութիւնը չսահմանափակել
ինձ ձեր հետեւեալ արտայայտութեան համար.
մի խիստ կծիծաղէի, բայց այդ զեկնակիութիւնը

ի բաց դնելով, առաջ բերենք ձեր խօսքերը.
 „Օ արմանալի կաղնուածք ունեն այտեղե (Ն-
 րևանի) օրիորդները; արեգակի տաքութիւնը
 նոցա հերիք չէ անու՛մ սիրոյ կրակով էլ են
 սկսում տաքանալ“: Օ արմանալի՛ բան, ասել է
 թէ կաղնվածքը նշանակութիւն ունի մարդոյ տա-
 քանալու կամ մրսելու համար, կամ թէ բա-
 նաստեղծի ասած տաքանալ խօսքը միայն յառա-
 ջանում է արեգակից, խեղճ մարդ. չգիտէք
 միթէ, որ բանաստեղծի համար գերազանցութիւն
 չունին ոչինչ կիզող արեգակներ, քան այն բանը,
 որին սէր ենք ասում: Չեր կարծիքին հետեւե-
 լով, ուրեմն Աթովպիայում, Արապիայում կամ
 առհասարակ այն երկրներում, որոնք էքուա-
 տորի տակ են, սէր չկայ . . .

Ինչ որ կվերաբերի „Աբբայորգու Մասը“
 և „Աւաղակապետի օղբը“ երգերի վերայ,
 դուք չէք կարող հասկանալ, որովհետեւ չէք
 տեսել այն գրուածքը, որից առնուած են դու-
 րանք. բայց ձեզ համար ինչպէս երևում է միև-
 նոյնն է, տեսած՝ թէ չտեսած՝ հարկաւորէ գրել,
 որովհետեւ այդ ձեր երդումն է: Չեր երդումն է
 թէ լաւ և թէ վատ, թէ արժան և թէ անարժան,
 թէ հասկացած լինիք նորա իմաստը և թէ չը-
 հասկացած — անշուշտ գրել և դորանով վա-

տաշնել մի որ և իցէ գրուածք, բայց չմոռանաք,
 որ դորանով դուք ցոյցէք տալիս ձեր ամենա-
 ստորին թուլութիւնը:

Այժմ գանք մենք ևս „Օ անգու՛ի վերայ
 երգին“: Դուք էլ համաձայնումէք, որ Օ ան-
 գուն կարողէ ողջունել Արաքսի հետ, բայց
 ասումէք թէ „նորա գլուխը իրա տեղն է Գե-
 դամայ լճի մօտ“, ուրեմն ձեր խօսքով երևում է,
 որ ողջունել կարելի է ոտներով և նոքա այսպէս
 պէտք է ողջունէին. Օ անգուն ոտներով՝ իսկ
 Արաքսը մէջքով: Այդպէս գուցէ ողջունումեն
 ձեր հասկացողութեամբ: Այդ զարմանալի չէ
 այնպէս, ինչպէս և մեզ զարմանալի չէ Չինաս-
 տանի բնակիչների իրար հետ քիթ քիթ քսելով
 ողջունատվութիւնը: Մեզանում առհասարակ
 բնորոշուած է գետի բերան ասել այնտեղը,
 որով մի գետի ջուր թափուելով միանում է միւսի
 հետ, բայց ոչ այն տեղը, որտեղից սկսում է, ու-
 րեմն գլուխը պէտք է լինի այնտեղ, որտեղ
 բերանն է:

Սորա համար հարկաւորէ՛ յԳՄԵԼԵԹԻՆ
 այլ — զուտ գիտութիւն:

Յետոյ գրումէք. „ինչ որ վերաբերում է նորա
 ոտներին բան չեմ կարող ասել, որովհետեւ ա-
 մառվայ ժամանակ չօրից ոտները երբեմն թու-

լանուածն, բայց զարմանում եմ, նորա ոտներ
 րի թուլութիւնը զուք նկատել էք Յունվա-
 րի 22-ին: Պ. կրիտիկոս, եթէ նորա ոտները
 ամառվայ ժամանակ շքից կթուլանան, ուրեմն
 կարող են թուլանալ և ձմեռվայ ժամանակ ցըր-
 տից: Իսկ այդ երգը գրված է Յունվարի 22-ին,
 ձմեռուայ կիսին:

Չեր քաղցրիկ գետը — շարունակումէք —
 ոչ կարող է սար ու ձոր ման գալ և ոչ գեղեց-
 կատեսիլ կանաչ դաշտեր: Մի՞թէ չգիտէք, որ
 բանաստեղծը կարող է նոյն իսկ քարին թռցնել
 երկինքը և այնտեղեց վայր գցել անհարազատ-
 ների գլխին: — Ես գրել եմ այն՝ ինչ որ կարող
 եմ, իսկ զուք, որպէս կրիտիկոս, չպէտք է
 անէք այն՝ ինչ որ կարողէք, այլ պէտք է անէք
 այնպէս ինչպէս հարկն է և ամենայն զգուշու-
 թեամբ պահպանէք կրիտիկայի սրբազան կող-
 մերը, եթէ միայն հասկացել էք նորանց. իսկ
 եթէ ոչ՝ խորհուրդ կտամ ձեզ բազմիցս սերտել
 (зубрить) վերոյիշեալ գրուածքը:

Իայց ներեցէք խնդրեմ, մի՛ գուցէ ձեզ ձան-
 ձրութիւն լինի մի բան ևս հարցանել (թէ՛ և նե-
 րէք չներէք ես իմ հարցը կառաջարկեմ). եթէ
 Օւնգուն ունի գլուխ, աչք, և ոտք՝ ապա ու-
 րեմն ունի և քիթ: Իայց ո՞րն է գիտէք . . . չը-

կարծեմ: Դորա համար միայն ես ստիպուած
 կլինեմ յՍօնչիկիս՝ միւս հատորովը ցոյց տալ
 ձեզ նորա ամենամեծ ձեզ համար պահած քիթը:

Դուք ի՞նչպէս провинциальный учитель
 էք և կրիտիկոս, որ չէք կարողանում ձեր մըտ-
 քում պահել (ըմբռնել) հինգ ոտանի և ութ
 տողանի Օւնգուն երգի որ է այս.

Երբ Օւնգուն լսեց
 Ես վերջին խօսքեր՝
 Երտասվօք լցուեց
 Կորա ջուխտ աչքը
 Եւ խիստ ողբալով
 Պտտվեց շարժուեց,
 Դէպի Երաքսը
 Լալագին դիմեց:

բովանդակութիւնը, այլ հասկացել էք այսպէս,
 յՕւնգուն այս լսեց և Երասխին ասեց՝:
 Խեղճ провинциальный учитель. — Ի՞նչպէս
 են ձեր провинцияի աշակերտները, գիտէ՞ք թէ
 այդ ևս մոռացել էք, գուցէ և չէք հասկացել:

Գրումէք. յՍօնչիկը զահր - զահրումար
 արեց մեր գլխին այս տարվայ գարունը: Ե. յ,
 պ. Օւիլինսկի, ոչ թէ միայն բաւականացաւ
 դորանով այլ մարտել տալ ևս կարողացաւ ձեզ
 այն: Լ. Ֆ. Ֆարբմ յՍօնչիկ, Bravo!

Այժմ մնում է իմ տան տիրոջ քննութիւնը: Տան տիրոջս մօտ կարդացի իւր շատ խընդ-
րելուց յետոյ «Պարունը» որ է այս .

Մեր Երկնային և Երարիչ Աստուածը,
Լցրեց իւր ողորմութեամբ աշխարհը,
Իւր Փրկչական առատ ձեռքը բանալով .
Օարդարեց դաշտք և անտառք իւր խնամքով :

Ե՛հա ծառեր զարդարվեցան կանաչով
Եւ վարդենիք շքեղացան վարդերով,
Ե՛հա ծաղկանց կոկոմները բացուեցան
Եւ դաշտերը խոտով ծաղկով լցուեցան :

Ոչխարները չեն հեռանում դաշտերից,
Սոխակները չեն անջատվում վարդերից,
Գլխի միջին պար են բռնում ձկունքը,
Օտա է ի ծառ ոտոստում են թռչունքը:
Թռչունները ոստոստալով երգում են,

Ռւրախ ուրախ ճլվալով ասում են.

«Ինչպէս լաւ է, երեխայ, այս հովումը
Երի այստեղ, հանդատացիր դաշտումը:

«Պու լաւ լիք, տես թէ ինչպէս ենք երգում
«Եւ թէ ինչպէս մենք այս դարունն ենք գովում:
«Մէ գվեցէք դուք Պարունը, պատասխանեց
երեխան,

«Ե՛յլ Ո՛վ որ, որ դայն ձեզ տուեց, գովեցէք
դուք միշտ Նորան :

Սորա համար ես նորանից (տան տիրոջիցս)
յետեւեալ պատասխանը ստացայ .

Իմ բէյինը զատ չմտաւ,

Տօ ինչ ես դու քշեր ցերեկ

Նստել գրքում հա գրքում:

Լից ամենը ոնչիչ բանա,

Օւր բանով ես պտրասպում:

Երբ լսեցի այս պատասխանը, նորա հաս-
կացողութիւնը իմանալու և խելքը փորձելու
համար (որով իմացվում է և պ. Օլիլինսկու-
նը) կարդացի և այս իմ ամենաառաջին աշ-
խատասիրած մանկական ոտանաւորը, խկա-
պէս առանց ինչ փոփոխման :

Դրո-՛ւնն ծոյլ աշակերպի.

Ե՛նում եմ գրիչ և գրում եմ այն,
Ինչ որ պատահեց գլխիս միանգամայն.

Մեր վարժապետը դաս ինձնից հարցրեց՝
Չգիտէի դասս մէկ հաստ նօլ դրեց:

Բարկացաւ վերաս մեր Ինսպէկտորը,
Երբ որ նօլ ստացայ միլենոյն օրը.

Ռոզգի ծեծելու ննջարան տարին,

Մինչև քսանը միանգամայն խփեցին:

Սաստիկ ցաւումէք վայ, վայ ասացի,
Չհամբերելով սկսայ լացի,

Չնայելով լացիս մեր Ինսպէկտորը.

Խփիր, ծառայ, ասաց, մինչև երսունը:

Յայնժամ խոստացայ մեր Ինսպէկտորին,

Որ դաս կպատրաստեմ ամենայն օրին.

Մեր Ինսպէկտորը էլ չծեծեց ինձի,

Իսկ ես դասերս լաւ պատրաստեցի:

Լսելով այս՝ իմ տան տէրը խիստ ուրախացաւ տրտ վերայ և ասաց ինձ յետեալը, տրորելով իւր ձեռերը ի նշան չափազանց հաւանութեան:

Այ էդ լաւ էր, ես ի՞նչ ասեմ,

Էդ դու շատ լաւ ես գրել,

Ես էդ մինը հաւանում եմ.

Շատ սիրուն ես դուս բերել:

Սորանով քննեցէք, սիրելի ընթերցողներ, պ. Օլիլնսկու զաղափարը և համոզմունքը, որը իւր բերանով է խոստովանում, ասելով. «որի հետ ես ևս համաձայն եմ»: Ուրախացէք ուրեմն երեխաներ, որ դուք ունիք այդպիսի մի դաստիարակ, ուրախացէք և դուք ընթերցողներ, որ դուք ունիք այդպիսի մի երեւելի զաղափարի տէր կրիտիկոս. կրիտիկոս, որ ամեն է անուանել այդպէս: Այդ պարունը ամաչելու փոխանակ խորհուրդ է տալիս տան տիրոջ խրատը չմոռանալ . . . Թէպէտ այդ իւր սուած

խրատի համար կիսուէի այնպէս՝ ինչպէս հարկաւորն էր, բայց իմանալով նորա ով և ինչ զաղափարի տէր լինելը՝ ափսոսում եմ իմ բերանը, անգամ և իմ գրիչը: Ասանորոյ ես միայն կասէի նորան, որ իւր այդ խորհուրդ տալը յետ առնի և պահի իւր համար դուցէ իւր ապագայ ժառանգներին պիտանացու լինի: Ապա թէ՛ ոչ ես չեմ ընդունում այդպիսի յիմար խորհուրդներ:

Ահա զըջուկիս բոլոր տառասխանները. 12 երեսում 5-երորդը տողում տպած է. բաղդին, հարկաւոր է բաղդիս. 24 եր. 11 տ. սեւիակը — սենեակը. 54 եր. 8 տող. ընչէր — ընչէր. 89 եր. 8 տ. (միայն 400 օրինակի մէջ) համ էլ պինդ — համ էլ մի պինդ. 99 եր. 9 տ. տեսակ — տեսակի. 100 եր. 11 տ. հերթկիր — հերթիկը. 104 եր. 1 տ. խաչանը — խանչալը: Արդեօք կկոչուին սոքա, (բացի սեւիակը և ընչէր, թէև դոքա էլ են տպագրական) ինչպէս գրել է պ. Օլիլնսկին, տառասխան, այդ թող քննէ ընթերցողը:

Այսպիսի սկնածութիւն անելուց յետոյ գալիս ենք այն հետեանքի, որ դուք ծանօթ էք Հայ գրականութեան հետ. բայց այստեղ անհաւատալի է թվում, որովհետև ինչպէս

երևում է դուք Հայերէն արտագրել անգամ չգիտէք. օրինակ ես յառաջաբանի մէջ ասում եմ «փափագով լսեցէք», իսկ դուք այն փոխարկել էք «փափագելով լսեցէք»: Սորանով դուք ոչ միայն տառասխալ, այլ և մտքի սխալ էք արել և կիզում գրում էք զիզում այսինքն 4 տառով: Յոյս ունիմ թէ կուղղէք ձեր պակասութիւնը:

Յետոյ պ. կրիտիկոսը գրում է այսպէս. «կարծում եմ, որ զիւղացին խօսելու ժամանակ «դոյն» «անդ» բառերը չի գործ ածիլ: Ուրեմն երևում է, որ դարձեալ չէ հասկացել «դոյն» բառը ես եմ գործ ածում, ո՛չ թէ զիւղացին, իսկ «անդ» ի համար, ես էլ համարում եմ, չնայելով որ Հայաստանի զիւղացիների խօսակցութեան մէջ մերթ ընդ մերթ այնպիսի խրթին բառեր ենք լսում, որ Խորէնացու և Աղիէի մէջ ենք տեսնում:

Եւելացնենք այստեղ և այս. «ոչ մի առողջ միտք չենք գտնում, — ասում է պ. կրիտիկոսը — բացի հիւանդութեան հառաչանքներից ահ, ո՛վ, ախ, ո՛հ և ինչ» Օտիճաղելու արժանի դատողութիւն! Պարոնք սորանց հառաչանքներ է անուանում, այն էլ հիւանդութեան հառաչանքն եր. ողորմելին դեռ չգիտէ որ ահ, հառաչանք չէ, այլ կրճատված ահա՛ ցուցական դերանուն

է, որ ո՛վ հառաչանք չէ, այլ կոչական դերանուն, որ ա՛յլ ցոյց է տալիս նաև հոգեկան դրութիւն . . . և վերջապէս ո՛ր միայն հառաչանք չէ այլ (արտասանութեանը նայելով) զարմացական մասնիկ, ինչպէս զօր.

«Ո՛հ, ինչ պատկեր զարմանալի,
Ներկայանում է աչքիս.
Ի՛նչ տեսարան սքանչելի,
Բացվել է իմ առաջես:

Տե՛ս Թուրքիէի 63 երեսը:

Եստպէս չէ՞ հառաչան անց արժանի պարոն: Մի խօսքով պ. Օլիւնսկին, պարզն ասեմ, շատ է նմանում Օղելոսին: Բայց ունի՞ արդեօք տեղեկութիւն այդ անձի վերայ, կարդացել է նորա պատմութիւնը, թէ կարդացել է ու տակաւին հասկացել չէ: Թէ այսպէս և թէ այնպէս այդ յայտնի չէ ինձ և իմանալու անգամ կարօտութիւն չունիմ:

Իբրև ամփոփումն մտքերի նա գրում է. «Ահա սարակ պարոնին խորհուրդ կտայի . . .» — Իսկ ես նորան կասէի, որ այդ խորհուրդը իւր համար պահի, առաջ իւր աչքի գերանին նայի, իսկ յետոյ այլոց շեղը նկատի և Օղելոսին նա չհետեի:

Խօսքս վերջացնելուց առաջ դառնանք կրթի-
կին պ. Րաբբունուն: Երեւոյ այս օրինակը,
չեմ կարծում թէ յանցանք էր սա իմ կողմից.
միայն որչափ կարողացայ պարզ և հասարակ
լեզվով գրեցի:

Եթէ նորից և պ. Օլիւնակին (մեր կրթի-
տիկոսը?) կուզի իւր ձեռքում խաղացնել կր-
թիտիկայ սուրբ բառը և սկսի կրկին մտտել
թերթեր, ես այն ժամանակ չեմ ցանկանալ
ուշադրութիւն դարձնել նորապէսների խօսքե-
րին:

Եյս էր իմ բերած օրինակը, որով և վերջ
է ստանում ձեր դատողութիւնը:



Յուսով եմ ներողամիտ կլինին մեր մեծա-
պատիւ ընթերցողները՝ սորա մէջ եղած մի քա-
նի տառասխալների համար, որք սրբազրու-
թեան ժամանակ, աչքից անցնելով, թողնված
են :

21465

2013

